

պ. Մանթաշեան ցանկութիւն յայանեց իւր վերայ վերցնելու և Էջմիածնի Մ. Տաճարի վերանորոգութեան ամբողջ ծախքը, և Վեհափառ Հայրապետը հաճութեամբ ու օրհնութեամբ ընդունեց այդ որդիական փառաւոր նուիրաբերութիւնը: Իսկ ամսի 27-ին Նորին Վեհափառութիւնը մեկնեց Տիսիսից և յաջորդ օրը ողջամբ ժամանեց Ս. Էջմիածին: Ղարխուն կայարանում ընդառաջ էին եկել Գեր. Տ. Մակար և Տ. Ղ. Լոնդ եպիսկոպոսները և Բարձր Տ. Աշոտ, Տ. Մխիթար և Տ. Յուսիկ վարդապետներ:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ.

Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը ս. Յարութեան տօնի առթիւ ընդունած շնորհաւորութեանց համար Իւր Հայրական շնորհակալիքն է յայտնում և Հայրապետական օրհնութիւնը բաշխում բոլոր այն եկեղեցական և աշխարհական հոգևոր զաւակաց, որոնք չէին մոռացել իրենց ջերմեռանդ զգացմանց հաւաստիքը ներկայացնել Հայաստանեայց ս. եկեղեցւոյ Ծերունազարդ Դիտապետին:



Վեհափառ Հայրապետը՝ տեղեկանալով որ ամսոյս 20-ին, Աշխարհամատրան կիւրակէ օրը, քահանայապետութեան օծումն պէտք է ընդունէ Սսում Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոս Տ. Սահակ, բարեհաճեց հեռազրաւ պատուիրել

Կեսարիոյ Առաջնորդ Տ. Տրդատ եպիսկոպոսին, որ շտապէ մասնակցելու ս. Յովնայի Հանդիսին, իբրեւ ներկայացուցիչ Իւր կողմից: Նոյն անօրինութիւնը հեռագրաւ յայտնուեց Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարքին, որպէս զի հարկաւոր զիւրութիւններն ընծայուեն Հայրապետական Վերադարձի ներկայացուցչին՝ իրեն եղած յանձնարարութիւնն ըստ արժանւոյն զլուխ հանելու համար:

Զատիական տօներն անցան սովորական հանդիսաւորութեամբ: Վեհափառ Հայրապետը բարեհաճեց կրկին ինքը կատարել Ունալուայի կարգը և ներկայ լինել աւագ շարժութուայ գրեթէ բոլոր ժամերգութիւններին, ինչպէս նաև ճրագալոյցի միաբանական ընթրիքին: Այսպիսով մայրենի եկեղեցուն նուիրած Իւր անսպառ կորովի գեղեցիկ փորձն էր տալիս կրկին և յոյս, թէ դեռ երկար տարիներ պէտք է հովուէ արթննութեամբ Իւր հօտին:

Այս տօներին յաճախում էր շարունակ հետու և մօտիկ տեղերից եկած ուխտաւորներն ու հանդիսական ժողովրդեան բաւական ստուար բազմութիւն, որից շատերին եկեղեցի է գրաւում մանաւանդ տարեցտարի զգալի կերպով կատարել յազործուող երգեցողութիւնը: Այս տարի ոչ միայն քառաձայն երգուած պատարագն իւր օրինակելի ներդաշնակութեամբ, այլ նաև տօնական շարականներն ու երգերը իրենց վսեմ բովանդակութեան համապատասխան արտայայտութիւն գտնելով՝ ձշմարիտ հոգեկան բերկրութիւն և սփոփանք էին պատճառում ուկնդիրներին:

Գարնան բացուելուն պէս սկսուեց նաև Մ. Աթոռ այցելողներին երթեկելութիւնը, որ, ինչպէս երևում է, սովորականից աւելի ընդարձակ չափով կլինի այս տարի: Յոտարազդի պատուաւոր հիւրերի թուում յիշատակութեան արժանի է մանաւանդ Վեմբրիջի համալսարանի ուսուցչապետ

Ս. Հարրիս՝ անուանի ասորագետ՝ որ գտել է ի միջի այլոց
 «Արխատիդէսի» առաջին անգամ հայերէն թարգմանութեամբ
 լոյս տեսած՝ ջատագովութեան ասորերէն օրինակը և շատ
 հմուտ է առհասարակ աշխատքի եկեղեցական գրականու-
 թեանն ու պատմութեանը, նա պատկանում է Կուեկէրների
 համայնքին, որի առաջնորդող սկզբունքներից մէկն է՝ օգնու-
 թեան հասնել առէն զաւանութեան պատկանող քրիստոնեայ
 եղբայրներին անխափր, առաւել այնանդ, ուր կարիքը մեծ
 է: Այս սկզբունքին հետեւելով իւր ամուսնուց ոչ պա-
 կաս անուանի Տիկին Հարրիս առաջիններից մէկն օգնու-
 թեան հասաւ Ուռհայի կոտորածի դժբաղդ զոհերին, և նո-
 րա օրինակելի մարդասիրական եռանդի շնորհիւ քաղցի ու
 մերկութեան դրկից խլուեցան հազարից աւելի հայ որբեր
 ու այրիներ: Երկու ամուսիններն՝ իրրեւ պարագլուխ իրենց
 համայնքի բարեգործական ընկերութեան, որբանոցներ ու
 աշխատութեան տներ բաց արին այնուհետեւ կոտորածից ա-
 մենաշատ փնասուած տեղերում՝ Ուռհայում, Մալաթիայում,
 Ակնում: Բայց դժբա տեական հաստատութիւններ չեն. իրենց
 խնամածներին որոշ հասակի հասցնելուց և դործի զնելուց
 յետոյ՝ նոքա կիսակեն այդ հաստատութիւնները և կերթան
 մի ուրիշ տեղ աւելի դժբաղդ կարօտեալներ որոնելու:
 Այդպէս Տ. Հարրիս անցեալ տարիները բուրբի դէմ կուռող
 բանակի մէջ էր գտնուում և աշխատում զարմանել, որչափ
 կարելի էր, իւր հայրենակիցների քրիստոնեայ եղբայրներին
 հասցրած վերքերը: Այժմ երկու ամուսինները ծանապար-
 հօրդում են՝ Տաճկաստան անցնելու և իրենց հիմնած հաս-
 տատութիւններն այցելելով (ուր դեռ մօտ 300 պատսպա-
 րեալներ կան) ապագայի նկատմամբ կարգադրութիւններ
 անելու:

Ամսոյս 16-ին Մայր Աթոռ եկաւ Պ. Մանթաշեանի
 փեսայ Պ. Յովսէփ Տիգրանեանը ծառաբապետ պ. Առաին-
 եանի հետ, որոնք երկու օր մնալով առ տեղեաւն քննեցին
 տաճարի շինութեան ներկայ դրութիւնը՝ ըստ այնմ նորո-

գութեան ծախքերի քանակը որոշելու համար: Պ. Ման-
թաշեան այդ մասին հաստատ որոշում անելը թողել էր,
մինչև որ ձիշտ տեղեկութիւններ կունենար, թէ վերանո-
քողութեան ի՞նչ պահանջներ կան:

Յարգելի տիկին Կատարինէ Նաղիրեան 1901 թ. փե-
տրուարի 21-ին յատուկ ընծայաբերական թղթով յայտնել
էր Նորին Վեհափառութեան, որ Տփլիսիում, Ճուղուրէթի
թաղում, Արսենայի մօտ ունի չորս դեռատին ազատ հող,
և խնդրում էր ընդունել այդ հողը իրրեւ նուէր ս. Եջմիած-
նին, որպէս զի այդ տեղի վրայ, եթէ յարմար նկատուի, կա-
ռուցուի Ներսիսեան Դպրանոցի համար դպրոցական նոր շի-
նութիւն: Որովհետեւ Դպրանոցի հոգաբարձութիւնը, նուի-
քուած հողի տեղի հեռաւորութիւնը ի նկատի ունենալով,
դժուարացել էր այդտեղ տեղափոխել դպրանոցը, ուստի
յարգելի տիկինը տարւոյս մարտի 22-ին թղթով խնդրել
կրկին է Վեհափառ Հայրապետին այդ հողը ընդունել իրրեւ
նուէր Մայր Աթոռին, առանց որեւէ պայմանի, եթէ վերջ-
նականապէս կորոշուի Ներսիսեան դպրանոցի շինութիւնն
ուրիշ տեղ կառուցանել:

Մեծ պահոց ընթացքում իւրաքանչիւր շաբաթ դրա-
կան երեկոյթներ էին տեղի ունենում ձեմարանում: Առա-
ջին շաբաթ օրն ի ցոյց դրուեցան աշակերտների նկարներն
ու գեղագրութեան նմուշները, ուսուցիչ պ. Լեոնեան խօսեց
գեղարուեստի մասին և մի քանի աշակերտներ կարդացին
տառնաւորներ ու սեփական շարադրութիւններ: Յաջորդ
երեք շաբաթ երեկոներին մի մի լսարանի ուսանողներ հան-
դէս բերին նիւթեր, Հայոց, Ռուսաց և Ընդհանուր գրակա-
նութիւնից, իրենց ուսուցիչների զեկափարութեամբ: Ս. Լու-
սաւորչի տօնի հանդէսը նուիրուած էր Մ. Աթոռի հիմնադ-
րութեան 1600-ամեայ յիշատակին, պ. Յ. Յովհաննիսեան
կարդաց իւր մի գեղեցիկ բանաստեղծութիւնը—ս. Լուսա-

ւորչի կանթեղը: Իսկ Զ. շաբաթ երեկոյեան տեղի ունեցաւ երաժշտական երեկոյթ՝ բաղկացած երկու բաժնից. առաջին բաժնում երգուեցան եւրոպական ընտիր երաժշտութեան նմուշներ (հատուածներ «Պաուսաս», «Թաշող Հոլլանդացին», «Միյնոն» օպերաներից, Շուբերտի մի երգը և լն), որոնց թուում Հ. Կոմիտասի ներդաշնակած «Գարուն» բանաւտեղ-ծութիւնը (Յովհաննիսեանի). իսկ երկրորդ բաժնում հայ-ժողովրդական (և մի երկու քրդական) երգեր, բոլորը Հ. Կոմիտասի ներդաշնակած: Երկու բաժնիների սկզբում բանա-խօսութիւններ եղան. խօսեցին Գալ. Սպիրիդոն Մելիքեան և Հ. Կոմիտաս վարդապետ: Խմբական երգեցողութիւններն ընդ-միջում էին մեներգներով. երգ եւրի մեծ մասին ձայնակ-ցում էր դաշնամուրը, մի քանիսին աշակերաններից կապած նուադաժուներէ փոքրիկ խումբը: Երեկոյթն առհասարակ խիստ հմուտ կերպով էր կազմուած՝ ծոխ և բազմակողմանի բովանդակութեամբ. յաջողութիւնը կատարեալ էր: Հասա-րակ մի դպրոցական երեկոյթ չէր այդ, այլ եթէ մի կարեւոր կենտրոնում իսկ տեղի ունենար, ընտիր հասարակութեան առաջ՝ մեծ տպաւորութիւն պէտք է թողնէր անշուշտ:



ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ.

Պար: Ի՛նչերը նոր տարին, Նովրուզ — Բայրամը, տօնում են, ինչպէս յայտնի է, գարնան սկզբին: Մարտի 9-ին նոր տարուայ առթիւ, ինչպէս Թաւրիզից հաղորդում են ТНФ. ЛИСТОК-ին, Ատրպատականի փոխաւքայի՝ Իրանի Թաղաժառանգի ձմեռ-նային պալատում ընդունելութիւն էր նշանակուած: Նորին Բարձրութեանը նոր տարին շնորհաւորեցին Թաւրիզի դիւա-նագիտական բոլոր մարմինները: Շնորհաւորութեան է՝ դիւա-ցել նաև Ատրպատականի թեմի Հայոց առաջնորդը, Բարձր.